ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 31-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին։

Ներածական խոսքով Հայաստանի գիտնականների համաժողովը բացեց Հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

— Այս օրերին,—ասաց Վ. Հ. Համբարձումյանը,—ամբողջ սովետական ժողովուրդը խորին բերկրանքով ու հպարտությամբ նշում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության փառապանծ հիսունամյակը։ Այս տոնը հայ ժողովրդի ամենաբերկրալի տոնն է, որովհետև՝ կես դար առաջ վառվեց այն անշեջ փարոսը, որը նրան մատնանշեց ազգային ազատագրության, սոցիալիզմի, խաղաղության և ժողովուրդների եղբայրության ուղին։

Հոկտեմբերյան տոնը, մատնանշեց Վ. Հ. Համբարձումյանը, արժանավայել է դիմավորում նաև սովետական գիտությունը։ Ասես հաստատելով, թե գիտությունը ինչ բարձունքների է հասել, պանծալի հոբելյանի նախօրերին սովետական ավտոմատ տիեզերակայանը փափուկ վայրէջք կատարեց Վեներա մոլորակի վրա և երկիր հաղորդեց այնպիսի արժեքավոր գիտական տվյալներ, որոնք տակավին մի քանի ամիս առաջ անմատչելի էին թվում մարդուն։ Այդ կարկառուն հաղթանակի մեջ իրենց ավանդն ունեն նաև մեր հանրապետության մասնագետները։ Իսկ երբեկ մենք իմացանք սովետական գիտնականների նոր, փայլուն նվաճման մասին՝ ուղեծրում տիեզերական ապարատների՝ աշխարհում առաջին ավտոմատ կցման մասին։ Վերջերս սկսեց գործել Սերպուխովի պրոտոնային արագացուցիչը, որը տալիս է 70 միլիարդ էլեկտրոնվոլտ բարձր էներգիայով պրոտոններ։ Դա տարրական մասնիկների ամենահզոր արագացուցիչն է աշխարհում։ Այս օրերին Երևանի էլեկտրոնային սինքրոտրոնը նույնպես գերազանցեց նախագծային հզորությունը, որը հավասար է 6 միլիարդ էլեկտրոնվոլտի։

Հոբելյանական տարում երկրի մի շարք գիտական հիմնարկներ արժանացան կառավարական բարձր պարգևների։ Դրանց թվում էր Բյուրականի աստղադիտարանը, որին հանձնվեց Լենինի շքանշան։ Օրերս որոշում հրապարակվեց ի պատիվ Հոկտեմբերի հիսունամյակի Հանրապետության գիտությունների ակադեմիան պարգևատրել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի և ՀԱՄԿ-ի հուշագրությամբ։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հոբելյանական ժողովում կարդացվեցին զեկուցումներ։

«Հոկտեմբերյան հեղափոխությունը և վերածնված Հայաստանը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը։ Նա իր զեկուցման մեջ կանգ առավ հայ ժողովրդի համար մեծ Հոկտեմբերի առանձնահատուկ նշանակության, վերածնված Հայաստանի պատմական նվաճումների վրա, մերկացրեց պատմության բուրժուական կեղծարարներին, որոնք փորձում են ամեն կերպ նսեմացնել Հոկտեմբերի նշանակությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում։

— Հենց Հոկտեմբերի շնորհիվ էր,—ասաց զեկուցողը, որ հայ ժողովուրդը, գտնվելով ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ, կորցրած իր անկախությունն ու պետականությունը, ձեռք բերեց սովետական սոցիալիստական պետություն, իր հայրենիքը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ամրապնդեց հայ ժողովրդի բարեկամությունը ռուս ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ։

Հայ ժողովրդի համար պատմական վիթխարի նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որը կատարվեց XIX դարի առաջին կեսին։ Դրա շնորհիվ հայ ժողովուրդը իր բախտը հավիտյան կապեց լենինիզմի հայրենիքի հետ։ Հայ ժողովրդի ազա-

տագրման գործում անգնահատելի դեր է պատկանում Վ. Ի. Լենինին, որը Հայաստանի աշխատավորությանը մատնանշեց հեղափոխական պայքարի ուղին։

Այնուհետև Գ. Բ. Ղարիբջանյանը հանրապետության պատմաբաններին կոչ արեց ավելի շատ գիտական աշխատություններ ստեղծել հայ ժողովրդի մարտական ու հեղափոխական ավանդույթների, Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարի փառապանծ էջերի մասին։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը հանդես եկավ «Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը» զեկուցումով։

— Սովետական Հայաստանը,— ասաց նա,— անցյալից ժառանգություն ստացավ մի հետամնաց ու քայքայված տնտեսություն, որը ցարական կառավարության գաղութային քաղաքականության, առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքների, ինչպես նաև դաշնակցական կառավարության արտաքին ու ներքին քաղաքականության ուղղակի հետևանքն էր։ Այդ օրհասական պահին, երբ իշխող դասակարգերն ու նրանց քաղաքական կուսակցությունները Հայաստանը հասցրել էին ազգային կործանման անդնդի եզրին, կոմունիստական կուսակցությունը ինքը ստանձնեց ժողովրդի բախտի պատասխանատվությունը։ Նա մեր ժողովրդին փրկեց կործանումից, աշխատավոր զանգվածներին պայքարի հանեց հանուն սովետական իշխանության, հանուն սոցիալիզմի։

Ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը իր զեկուցման մեջ մանրամասնորեն անդրադարձավ Հայաստանի ինդուստրիալ զարգացման փուլերին, հանրապետությունում հզոր արդյունաբերության և բարձր զարգացած գյուղատնտեսության ստեղծման հարցերին։ Նա ընդգծեց, որ Հայաստանի ինդուստրացումը ոչ թե առանձնակի պրոցես էր, այլ Սովետական Միության ինդուստրացման ամբողջական պրոցեսի բաղկացուցիչ մասը։

Հայաստանի բարձր ինդուստրիալ էկոնոմիկայի բնորոշ առանձնահատկություններից մեկը,— ասաց զեկուցողը,— այն է, որ ներկայումս արտադրողական ուժերի զարգացման բնագավառում մեկ տարում այնպիսի առաջադիմություն է կատարվում, որի համար առաջներում տասնամյակներ էին հարկավոր։ Օրինակ, ներկայումս կապիտալ ներդրումների ծավալը մեկ տարում գերազանցում է այն գումարից, որը այդ նպատակով հատկացվել է սովետական իշխանության առաջին 25 տարում։ Մեր հանրապետությունում թողարկվող 15 տեսակ արդյունաբերական արտադրանքի (քիմիական ու հանքարդյունաբերության արտադրանքը, շարժական էլեկտրականները, ուժային տրանսֆորմատորները, մետաղահատ հաստոցները և այլն) տեսակարար կշիռը կազմում է դրանց համամիութենական արտադրության 5-ից մինչև 15 տոկոսը։

Այնուհետև զեկուցողը բնութագրեց Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացման օրինաչափությունները։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը նվիրված էր գիտության նվաճումներին։

— Այսօր,— ասաց նա,— նշելով փառապանծ հոբելյանը, սովետական ժողովուրդը հատկապես շեշտում է գիտության բնագավառում ձեռք բերված նվաճումները։ Դրա համար կան շատ հիմքեր, որոնցից առաջինը գիտության իսկապես աննախադեպ ծաղկումն է մեր երկրում։ Ճիշտ է, գիտությունը առաջ էլ գոյություն է ունեցել, սակայն այն ժամանակ դա առանձին գիտնականների կամ ծայրահեղ դեպքում հիմնարկների գործն էր։ Միայն այն հասարակության մեջ, որը ձգտում է ժողովրդի ամբողջ կյանքը կառուցել գիտական հիմունքներով, գիտությունը կարող է ստանալ իր զարգացման բոլոր անհրաժեշտ պայմանները։

Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը իր զեկուցման մեջ մանրամասն արծարծեց հանրապետությունում գիտության զարգացման հարցերը։ Նա նշեց, որ պատմական պայմանների բերումով Հայաստանը 1920 թ. գիտության զարգացման տեսակետից զգալիորեն ետ էր մնում առաջավոր, բարձր զարգացած երկրներից։ Սակայն սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը, որը մեր հանրապետությունում դրեց կազմակերպված գիտական աշխատանքի սկիզբը։

1920—1930 թթ. Հայաստանում բազա և կադրեր ստեղծվեցին մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, հումանիտար գիտությունների զարգացման համար։ 1943 թ. ստեղծվեց ակադեմիա։ Կազմակերպվեցին գիտահետազոտական շատ հիմնարկներ, առաջացան գիտական նոր ուղղություններ ու դպրոցներ։ Գիտական կադրերի պատրաստման գործում վճռական դեր խաղացին սերտ կապերը Սովետական Միության եղբայրական, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի հետ։ Ռուս ականավոր գիտնականները սիրով մասնակցում էին Հայաստանի համար գիտական կադրերի պատրաստմանը։

Այնուհետև ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը հանգամանորեն կանգ առավ հանրապետությունում գիտության առանձին ճյուղերի զարգացման վրա, բնութագրեց Հայաստանի գիտնականների նվաճումները մաթեմատիկայի, ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, էլեկտրոնիկայի, հաշվողական տեխնիկայի, կենսաբանության, երկրագիտության, հասարակական գիտությունների բնագավառներում։

Ժողովում, հանդիսավոր իրադրության պայմաններում, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի և ՀԱՄԿ-ի հուշագրոշը հանձնեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիային։

Ինձ, ասաց ընկ Ա. Ե. Քոչինյանը, մեծ ուրախություն է պատճառում, որ այս տոնական օրը հուշագրոշ եմ հանձնում մեր ակադեմիային։ Հուշագրոշը առհավետ մնալու է ձեզ մոտ, խորհրդանշելով հանրապետության գիտնականների հոյակապ նվաճումները և ստեղծագործական քանքարը։

Անցած կես դարում հեքիաթային փոփոխություններ են կատարվել Սովետական Հայաստանում, նրա էկոնոմիկայի, կուլտուրայի, գիտության աննպարեզում և դրանում մեծ վաստակ ունի գիտությունների ակադեմիան։ Այսօր մենք խորին երախտագիտությամբ ենք տալիս մեր այն գիտնականների անունները, որոնք հաջողությամբ զարգացնում են սովետական գիտությունը, նրանց անունները, ովքեր լայնորեն հոչակված են ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից շատ հեռու։

Եթե մեզանից յուրաքանչյուրը հետադարձ հայացք գցի անցյալին, ապա վերստին կհամոզվի, թե սովետական իշխանության տարիներին ինչպիսի հսկայական ճանապարհ է անցել Հայաստանը, ինչպիսի բարձր մակարդակի է հասել կյանքի բոլոր բնագավառներում։ Թույլ տվեք մի անգամ ևս շնորհավորել մեր գիտնականներին և նրանց հաջողություններ մաղթել ի բարօրություն սոցիալիստական հայրենիքի։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը ջերմորեն շնորհակալություն հայտնելով բարձր պարգևի համար, ասաց, որ հուշագրոշը հանրապետության գիտնականներին պարտավորեցնում է ավելի շատ աշխատել՝ ի փառս սովետական գիտության։

ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը մեծ ոգևորությամբ ընդունեց ողջույնի նամակ՝ հասցեագրված ՍՄԿԿ Կենտկոմին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին, հավաստիացնելով, որ Հայաստանի գիտնականները բոլոր ջանքերը կգործադրեն սովետական գիտության հետագա զարգացման համար։

ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի հորելյանական նստաշրջանը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին։

Ներածական խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը։

— Մարդկության պատմության տարեգրությունը,—ասաց նա,—չգիտե ավելի նշանակալից դեպք, քան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Որքան ժամանակը հեռացնում է մեզ 1917 թվականի հոկտեմբերի իրադարձություններից, այնքան վեհ և պանծալի է հնչում նրանց նշանակությունը մարդկության պատմության համար։ Անցած 50 տարիների ընթացքում մեր աչքերի առաջ տեղի է ունեցել վիթխարի շրջադարձ՝ մեր մոլորակի վրա ապրող ժողովուրդների մեծ մասը ընդգրկվել է այդ շարժման մեջ և այսօր մարդկային հասարակության պատմության բնորոշ օրինաչափությունն է՝ անցում դեպի անդասակարգ հասարակարգը՝ դեպի կոմունիզմ։

Հատկապես մեծ է Հոկտեմբերի նշանակությունը հայ ժողովրդի համար։ Մեծ եղեռնից հետո թվում էր, թե հայությունը ընդմիշտ կորցրեց իր հայրենիքը, սակայն Հոկտեմբերը եկավ հյուսիսից և փրկեց հայ ժողովրդի ապագան։ «Եթե հեղափոխությունը չլար,—ասել է մեծ վարպետ Ավետիք Իսահակյանը,—հայ ժողովուրդն իր հայրենիքի մեջ պիտի հալվեր, ոչնչանար, արհամարհելի փոքրամասնություն պիտի դառնար։ Շնորհիվ մեծ Հոկտեմբերի հնարավոր եղավ կորստից փրկել Հայաստանի մի մասը և այնտեղ հաստատել սովետական իշխանություն։ Այնուհետև Սովետական Հայաստանը զարձավ աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի փարոսը՝ նրա ավետյաց երկիրը, նրա ազգային պետությունը և մեր ժողովրդի ազգամիավորման կենտրոնը։